ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 **ԸԿԵԻՊ բաժնի կանոնադրական գործառույթների շրջանակում կատարած աշխատանքների վերաբերյալ**

Այցելություններ են իրականացվել արցախյան պատերազմում զոհված, անհայտ կորած, վիրավորում ստացած, եռամսյա զորահավաքի մասնակից զինվորների, պատերազմից տուժած, բազմազավակ և բազմանդամ, սոցիալապես անապահով, հաշմանդամություն և այլ խնդիրներ ունեցող ընտանիքներ, ուսումնասիրվել են նրանց կարիքները, ցուցաբերվել է անհրաժեշտ աջակցություն առաջարկված տարբեր հարցերի լուծմանը:

Կատարվել է համագործակցված աշխատանք մարզի խնամալության և հոգաբարձության մարիների, ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության բաժինների անչափահասների գործերով և ընտանեկան բռնության կանխարգելման խմբերի և հասարակական կազմակերպության ներկացուցիչների, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների և առողջապահական կազմակերպությունների հետ՝ մարզում կատարված ընտանեկան բռնության դեպքերի դրդապատճառներիի ուսումնասիրության նպատակով: Ըստ ոստիկանության տարածքային բաժինների տեղեկատվության մարզում գրանցվել է բռնության 8 դեպք:

Բաժինը մասնակցել է համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, այդ թվում Ձերմուկ համայնքի աջակցող ցանցի այն նիստերին, որտեղ քննարկվել են ընտանիքների և երեխաների հետ կապված հատուկ դեպքերը, իրականացվել է աշխատանք ընտանեկան տարաձայնությունների լուծման, հաշտության վերականգնման, երեխայից առանձին ապրող ծնողի հետ շփումն ապահովելու, տեսակցության կարգ սահմանելու, հայրության ճանաչման իրավական հիմքի գրանցման ուղղությամբ (Ձերմուկ-Կեչուտ, Գլաձոր-Գետափ, Վերնաշեն, Արենի-Ագարակաձոր, Վայք, Ձեղեա): Բաժնի և Վայքի ԽՀՀ-ի միջոցով վերականգնվել է զոհված զինծառայողի երեխաների և հայրական կողմի հարազատների շփումը:

ԸԿԵԻՊ բաժինը միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերի հետ իրականացրել է համատեղ աշխատանք ոստիկանության բաժինների ԱԳ և ԸԲԿ խմբերում պրոֆիլակտիկ քարտային հաշվառման վերցված իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների և նրանց ընտանիքների հետ, տնային այցելությունների ժամանակ կատարել բացատրական աշխատանք՝ կրկնակի իրավախախտումները բացառելու նպատակով: Բաժնի համապատասխան մասնագետները մասնակցել են անչափահասների հետ տարվող քննչական գործողություններին:

Տարվա ընթացքում հաշվառման է վերցվել 9 անչափահաս:

Բաժինը որդեգրման ընթացակարգի վերաբերյալ կատարել է խորհրդատվական աշխատանք երեխա որդեգրելու ցանկություն հայտնած 2 ընտանիքի հետ, իրականացրել փաստաթղթերի փաթեթի և անձի կենսապայմանների ուսումնասիրություն /Ջերմուկ, Եղեգնաձոր/:
2021 թվականին կենտրոնացված հաշվառման է վերցվել առանց ծնողական խնամքի մնացած 8 երեխա՝ / Եղեգնաձոր՝1, Վայք 2, Ջերմուկ՝ 5 /, նրանց նկատմամբ սահմանվել է խնամակալություն:
«Երևանի «Ջատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ից կենսաբանական ընտանիք է վերադարձել մեկ երեխա (Վայք համայնք, Ջեղեա բնակավայր), դադարեցվել է առանց ծնողական խնամքի մնացած 10 երեխայի նկատմամբ խնամակալությունը՝ ընտանիքի հետ վերամիավորվելու կապակցությամբ /Ջերմուկ՝ 4, Գլաձոր՝ 2, Եղեգիս՝ 1, Մալիշկ՝ 3/:
<< Մանուկ>> տեղեկատվական համակարգ է մուտքագրվել կյանքի դժվար իրավիճակում գտնվող 205 երեխայի վերաբերյալ տվյալներ և կատարվել է հաշվառված երեխաներին համակարգից դուրս գրելու աշխատանք՝ 18 տարին լրանալու կապակցությամբ:
Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 65 երեխայի տրվել է ներառական կրթության վկայագիր:
Կատարվել է Արցախից պատերազմի հետևանքով տեղահանված և մարզում ապաստանած 22 ընտանիքի հաշվառում և տվյալների մուտքագրում՝ ՀՀ միգրացիոն ծառայության համակարգ:
Միջգերատեսչական համագործակցության կողմերի հետ քայլեր են ձեռնարկվել Հերմոն և Եղեգիս բնակավայրերի հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երկու ընտանիքի անչափահաս երկու երեխայի և երկու չափահասի խնամքը մասնագիտացված հատուկ հաստատությունում կազմակերպելու ուղղությամբ:
Բաժնի գործառույթներից է մարզում կանանց և տղամարդկաց իրավահավասարության հիմնահարցերի ուսումնասիրությունը, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակումը: Այդ գործառույթի շրջանակում մարզպետարանում կազմակերպվել են գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողովի նիստեր, որի ժամանակ քննարկվել են ընտանեկան բռնության դեպքեր, միջոցներ են ձեռնարկվել բռնության ենթարկված կանանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Բաժինը սերտորեն համագործակցել է միջազգային բարեգործական հիմնադրամների հետ, աջակցել մարզում իրականացրած հումանիտար ծրագրերին և նախաձեռնություններին:

Իրականացվել է համատեղ աշխատանք՝

- << **Դիակոնիա>> բարեգործական հիմնադրամի հետ**, որի արդյունքում մարզի սոցիալապես անապահով, ինչպես նաև արցախյան 44 – օրյա պատերազմում զոհված, վիրավորում ստացած և անհայտ կորած զինծառայողների ընտանիքների տրամադրվեց սննդի, հիգիենայի

պարագաների և ծածկոցների փաթեթներ, հիմնադրամի շնորհիվ <<Աստվածաշունչ և հաց>> ծրագրի շրջանակում մարզի 180 ընտանիք ամեն օր ստացավ թարմ հաց, Մալիշկա համայնքի սոցիալապես անապահով, անհայտ կորած զինծառայողների և միայնակ մոր ընտանիքների 19 երեխա ընդգրկվեց սննդի աջակցության ծրագրում:

- **<<Շեն>> բարեգործական կազմակերպության հետ՝** Արցախի պատերազմում երկու որդի և չորս տուն կորցրած ընտանիքի համար Բարձրունի բնակավայրում կառուցվող առանձնատան շինարարության ուղղությամբ,
- **Վիվա-ՄՏՍ և <<Հայաստանի Ֆուլլեր>> տնաշինական կենտրոն>> բարեգործական հասարակական կազմակերպության հետ՝** Գետափ և Շատին բնակավայրերում սոցիալապես անապահով 2 ընտանիքի բնակարանաշինության ծրագրերում ընդգրկելու և շինաշխատանքներ կատարելու ուղղությամբ,
- **<<Հայկական Կարմիր խաչ>> ընկերության հետ՝** << Ծերերի խնամք և առողջ ծերացում>> ծրագրի շրջանակում իրականացվող շինարարական աշխատանքների հետ կապված:

  Բաժնի աջակցությամբ իրականացվեց նաև իրանահայ համայնքի և Հայաստանում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանատան կողմից կարիքավոր ընտանիքներին տրված սննդի բաշխման աշխատանքեր:

ԸԿԵԻՊ բաժնի աջակցությամբ կազմակերպվել է

- Քննարկում <<Մանկական զարգացման հիմնադրամի>> և <<Վորլդ Վիժն Հայաստան>> զարգացման և բարեգործական միջազգային կազմակերպության նախաձեռնությամբ՝ նվիրված խոցելի ընտանիքների և Արցախից տեղահանված ընտանիքների խնդիրներին,
- Դասընթաց ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի նախաձեռնությամբ՝ <<Բռնության կանխարգելման միջոլորտային ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների զարգացում՝ հիմնված երեխայազգայուն և գենդերային զգայուն մոտեցումների վրա >> թեմայով ծրագրի շրջանակում,
- Սեմինար՝ <<ԱՄՔՈՐ–Հայաստան>> ԲԿ-ի կողմից՝ <<Թրաֆիքինգի ենթարկված մարդկանց նույնացում և ուղղորդում>> թեմայով,
- Կլոր-սեղան քննարկում՝ <<Մանակական զարգացման հիմնադրամի>> նախաձեռնոթյամբ՝ նվիրված Արցախից տեղահանված քաղաքացիների հիմնախնդիրներին:

Բաժինը մասնակցել է

- Մարզում համընդհանուր ներառական կրթության իրականացմանը նվիրված քննարկմանը,

- ԵՄ և Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպված հանդիպմանը՝ նվիրված միգրանտների հիմնախնդիրներին,
- ՀՕՖ-ի <<Երեխաների աջակցության կենտրոն>> հիմնադրամի նախաձեռնությամբ <<Ընտանեկան միջավայր և համայնքահեն ծառայություններ Հայաստանի երեխաների համար>> ծրագրի շրջանակում կայացած երկօրյա հանդիպում-քննարկմանը,
- ՀՕՖ- ի Երեխաների աջակցության կենտրոնի և համայնքների հետ Աղվերանում սոցիալական աշխատողների համար նախատեսված <<Երեխաների խնամատարության ինստիտուտի զարգացման ընթացակարգերը>> թեմայով երկօրյա դասընթացի կազմակերպական աշխատանքներին,
- ՀՀ ԱՍՀ նախարարության և <<ՅՈՒՆԻՍԵՖ>>-ի հայատանյան գրասենյակի նախաձեռնությամբ կազամակերպված ՀՀ մի շարք օրենքների նախագծերի հանրային քննարկմանը,
- Քովիդ-19-ին և ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտին առնչվող առցանց քննարկումների,
- Գենդերայն հավասարության և գենդերային բռնության վերաբերյալ մեդիա եռօրյա դասընթացի:
- Համագործակցել է << Լոգոպեդների հայկական ասոցիացիա>> ՀԿ-ի հետ՝ սոցիալապես անապահով, լոգոպեդի կարիք ունեցող դպրոցահասակ երեխաների հաշվառման գործում:

Բաժինը մասնակցել է Ջերմուկ, Վայք և Ջառիթափ համայնքներում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքներին՝ ոլորտի մասով:

Բաժինն իր գործառույթների շրջանակում նախապատրաստել է հաշվետվություններ, զեկուցագրեր, ստացված նախագծերի շրջանակում ապահովել քննարկումներ, առաջարկություններ, կատարել է քաղաքացիների դիմումների ուսումնասիրություն և խորհրդատվական աշխատանք:

Ընտանիքի, կանանց և երեխաների
իրաավունքների պաշտպանության բաժին

25/01/2022թ.